

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ` 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Գիտելիքների օրը հատկապես առանձնահատուկ է առաջին դասարանիների համար, որոնց թիվը Վրաստանում ուսումնական այս տարի 52 524 է, երկրի աշակերտության ընդհանուր` 640 260 թվի մեջ:

Ուսումնական այս նոր տարին եւս փոփոխությունների եւ նոր հնարավորությունների սկիզբ է: Եվ քանի որ կրթությունը յուրաքանչյուր երկրի ապագայի գրավակամն է` Վրաստանի կրթության, գիտության ու երիտասարդության նախարարությունը եւս շարունակում է բարեփոխումներ, որոնք միտված են համակարգի արդիականացմանն ու էլ ավելի զարգացմանը եւ, որոնք թելադրում է ժամանակն ու մեր երկրի բարեկեցիկ տեսլականը: Միտվելի՛ աշակերտներ, ուսումնառության ընթացքում ձգտե՛ք հնարավորինս նոր գիտելիք կուտակել: Նախանշե՛ք նպատակներ ու գնացե՛ք դրանց ետևից՝ համոզված լինելով, որ ձեզանից յուրաքանչյուրի հաջողությանը է պայմանավորված մեր վաղվա օրը:

2023-2024 ուսումնական տարում թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի 12-րդ ավարտական դասարանը՝ իմ դասղեկական դասարանը, տվել է 18 շրջանավարտ, որոնց թվում 3 ոսկե (Անգելինա Բրուտյան, Էրիկ Տերտերյան, Անդրանիկ Մկրտչյան), 1 արծաթե (Ալիկա Աթոյան) մեդալակիր:

Տասնութ շրջանավարտից իմը մասնակցել է Միասնական ազգային քննություններին եւ հաջողությամբ ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություններ, ընդ որում` Էրիկ Տերտերյանը հանձնել է երեք առարկայից քննություն ինչպես վրացալեզու եւ ռուսալեզու դպրոցների շրջանավարտների դեպքում է եւ չի օգտվել «1+4» ծրագրից՝ ընդունվելով թբիլիսիի Վրաստանի Սեւծովյան միջազգային համալսարանի առաջին կուրս: Կարծում եմ, այս հանգամանքը բացառիկ է վերջին տարիների ընթացքում եւ մանավանդ, որ Էրիկը թիվ 104 դպրոց է տեղափոխվել Հայաստանից ու միայն 4-րդ դասարանից սովորել ու տիրապետել վրաց լեզվին:

«1+4» ծրագրի շրջանակներում իմ 8 շրջանավարտներն ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ, նրանցից 5-ը` Անգելինա Բրուտյանը, Ալյոնա Թորոսյանը, Մարիամ Քոչարյանը, Մարիա Բրուտյանը, Միքայել Ռամազյանը` 100 տոկոս ֆինանսավորմամբ:

Ուրախ եմ նշել, որ այսօր հնարավորություն ունեմ գիրկս առնել ու նոր ճանապարհի մեկնարկը շնորհավորել 17 առաջին դասարանիների: Հուսով եմ, Աստուծո օրհնությամբ դեռ շատ առիթներ են լինելու նրանց հաջողություններով ուրախանալու եւ հպարտանալու համար:

ԻԶԱԲԵԼԱ ԱՐՐԱՍՅԱՆ
Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի



Չնայած Շահումյանի թիվ 1 դպրոցում առկա տարբեր խնդիրների, մեր ուսուցիչները մեծ պատասխանատվությամբ են սկսում նոր ուսումնական տարին: Ոգեւորիչ է նրանց համար այն փաստը, որ նախորդ ուսումնական տարվա մեր 17 շրջանավարտից 12-ն ընդունվել են տարբեր կրթական հաստատություններ: Միայն 7 ուսանող անվճար ուսումնառելու է թբիլիսիի Ի.Չավախիշվիլու անվան, Ի.Ճավճավաձեի անվան, ինչպես նաեւ պետական բժշկական համալսարաններում: Նշեմ նաեւ, որ, ամառան ընթացքում, մեր շրջանավարտներից քիմիայի օլիմպիադայի հանրապետական փուլում հաղթող ճանաչված Էրիկ Ղազազյանը մասնակցել է Սաուդյան Արաբիայում կայացած քիմիայի միջազգային օլիմպիադային:

Վստահ եմ, որ շնորհիվ մեր ուսուցիչների ջանքերի, տարեցտարի ավելի նպատակաուղղված ուսուցում կապահովվի դպրոցում եւ ավելի գոհացնող կլինեն մեր աշխատանքի արդյունքները: Մեր շրջանավարտներին այս տարի փոխարինելու կգան 17 առաջին դասարանիցիներ, այս իրողությունը եւս հուսադրող է ոգեշնչող է: Շնորհավորում եմ մեր աշակերտությանը, մաղթում նորանոր գիտելիքներ, քանզի գիտելիքն է այն մեծագույն արժեքը, որից կարող են ծնվել վե՛ր նպատակներ, իսկ մեզ` ուսուցիչներին, ցանկանում եմ ամուր առողջություն եւ ստեղծագործական նորանոր նախաձեռնություններ:

ՋՈՒԼԻԵՏԱ ՍԱՐԱԹԵԼՅԱՆ
Շահումյանի թիվ 1 հանրային դպրոցի ուսմասվար, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար



Միտվելի՛ աշակերտներ, ուսանողներ, մանկավարժներ, կրթության բնագավառի ներկայացուցիչներ, առաջին անգամ մեր դպրոց ուրբ դմող 16 թանկագին փոքրիկներ, սիրով շնորհավորում են բոլորիդ` կարեւոր տոնի՝ Գիտելիքների օրվա առիթով: Թող սեպտեմբերյան հիշարժան առաջին օրը եւ ձեր կյանքի մնացած բոլոր օրերը լցված լինեն անսպառ ուրախությամբ, նոր գիտելիքներ ձեռք բերելու եւ նոր հաջողություններ գրանցելու տրամադրվածությամբ, երազանքների ու հրաշքների իրականացմամբ:

Օրվա խորհուրդը պահպանելով` հաջողություն եմ մաղթում այս տարվա 9 շրջանավարտին, թող նրանց համար տարին լինի հաջողակ ու արգասաբեր:

2023-2024 ուսումնական տարվա շրջանավարտներ Ռազմիկ Կեռեկյանը եւ Պողոս Բալոյանը, իրենց բարձր ակադեմիական առաջադիմության համար արժանացել են արծաթե մեդալի: Իմը շրջանավարտ, ստանալով բարձր միավորներ, ընդունվել է Վրաստանի տարբեր բուհեր, որից 6-ը` անվճար: Նրանց մաղթում եմ նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ ուսման բնագավառում: Թող այս օրը նրանց համար դառնա՝ լուսավոր ու մեծ ճանապարհի սկիզբ:

Իմ շնորհակալությունն եմ ուզում հայտնել Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության նախարարությանը` աշակերտներին անվճար ուսումնական դասագրքերով ապահովելու, առաջին դասարանիցիներին համակարգիչներ նվիրելու համար:

Երախտագիտության խոսքեր են ուզում հղել` 2023 թվականին սկսված եւ ընթացքի մեջ գտնվող դպրոցի վերանորոգման աշխատանքների համար Վրաստանի կառավարությանը, կրթության, գիտության եւ երիտասարդության նախարարության ենթակառուցվածքի զարգացման գործակալությանը, Ասպինձայի մունիցիպալիտետի քաղաքապետ Ռոստոմ Մագրաբվելիձեին, Ասպինձայի մունիցիպալիտետի ռեսուրս-կենտրոնի վարիչ Տրիստան Մուրադաշվիլուն:

Առիթից օգտվելով` ուզում եմ շնորհակալություն հայտնել «Վրաստան» թերթի անձնակազմին` պարբերականի միջոցով մեզ հուզող հարցերն ու ձեռքբերումները լուսաբանելու համար:

ՆԵԼԼԻ ԴՊՐՈՒԿՉՅԱՆ
Դամալայի հանրային դպրոցի տնօրեն



ՇԱՀՈՒՄՅԱՆՅԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՇՈՒՑ ՄԻՆՉԵՎ ԼՃԱՓՆՅԱ ՏԱԲԱԾՂՈՒՐԻ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ



Արփինե Բաղայանը 28 տարեկան է: Ծնվել է Վրաստանի Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանում, մանկավարժների ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում, բարձրագույնը` Հայաստանի Վանաձոր քաղաքի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարանի Մանկավարժության ֆակուլտետի «Մանկավարժություն եւ մեթոդիկա» (Տարրական կրթություն) բաժնում, որն ավարտել է գերազանցության դիպլոմով: Ուսուցչությունը սկսել է 21 տարեկանից, հարազատ ավանի թիվ 3 դպրոցից, մայրենի, մաթեմատիկա, բնություն առարկաների դասավանդմամբ: Ապա` աշխատել Շահումյանի թիվ 1 հանրային դպրոցում: Երկու տարի առաջ ամուսնացել է տաբաժուրցի երիտասարդի հետ եւ տեղափոխվել Տաբաժուրի չքմաղ լճի ափին գտնվող համանուն գյուղ: Դպրոցի տնօրենի հավաստագրման քննության երկու փուլերը թեստավորումն ու հարցազրույցը հաջողությամբ հանձնելուց հետո դպրոցի հոգաբարձուների կողմից ընտրվել է Բորժոմի մունիցիպալիտետի Տաբաժուրի գյուղի հանրային դպրոցի տնօրեն, որից

վանիով: Իսկ Տաբաժուրի`ն...

- Վերջին 50 տարիների ընթացքում` կրթօջախն ունեցել է շատ նշանավոր շրջանավարտներ, որոնք դարձել են բժշկության, մանկավարժության, տնտեսագիտության ոլորտների առաջնակարգ ու արիեստավարժ մասնագետներ, ամենահանճարեղը, կարծում եմ, դեռեւս սովորում է մեր դպրոցում...

- Ո՞րն է Արփինե Բաղայան մանկավարժի ու տնօրենի գործունեության նպատակը:

- Ամեն կերպ ձգտում եմ ոչ միայն գիտելիքներ փոխանցել աշակերտին, մոտիվացնել աշակերտի մեջ` կրթության նկատմամբ սերը, ինչը առաջնահերթն է, այլ նաեւ` հարազատների ու շրջապատի հանրության հանդեպ օգտակարության զգացում դաստիարակել, նրանում ձեւավորել կյանքին բարին բերող, մշտապես ավելի ձգտող անձնավորություն: Իմ նպատակն է` նպատակավոր պայմաններ ստեղծել ուսուցիչ-աշակերտ փոխկապակցի ու արդյունավետ հարաբերությունների համար, կարծում եմ դա որոշ չափով ստացվում է:

- Դուք Վրաստանի այլ դպրոցների տնօրեններից միակն եք, որ չէք նշանակվել իբրեւ տնօրենի պաշտոնակատար, այլ` դպրոցի հոգաբարձուների կողմից ընտրվել եք որպես լիարժեք տնօրեն...

- Այդ հարցում ինձ, անշուշտ, շատ օգնեց վրացերենի լավ իմացությունը:

Վրաց լեզուն սովորել եմ փոքր տարիքից` հեռուստատեսության շնորհիվ, լեզուն յուրացնելուն օգնել է տարբեր ծրագրերի մասնակցելը: Եվ ամենակարեւորը` Շահումյանում ունեցել եմ վրաց լեզվի արիեստավարժ ուսուցիչներ, որոնց շնորհիվ հարստացրել եմ բառապաշարս...

Օգտվելով ընձեռված հնարավորությունից` շնորհավորում եմ կրթության ոլորտի բոլոր ներկայացուցիչներին, մաղթում եմ նրանց աշխատանքային նոր եռանդ` մեր պետության հիմնական ներուժի` մարդկային ռեսուրսի զարգացման իրենց հետեւողական աշխատանքում: Իսկ մեր սիրելի աշակերտներին ցանկանում եմ, որ գիտելիք ստանալու խանդավառությունը նրանց ուղեկցի ուսումնառության բոլոր տարիներին:

- Հարգարժան Արփինե Բաղայան, «Վրաստան» թերթի խմբագրակազմը սիրով շնորհավորում է Ձեզ` դպրոցի տնօրենին բարդ ու պատասխանատու պաշտոնակատարության ու նոր ուսումնական տարվա մեկնարկի առիթով: Ցանկանում եմ` Ձեր ոչ դյուրին ու պատվավոր ճանապարհն անցնեք անսասան առողջությամբ եւ նոր ձեռքբերումներով:

Ջրուկեց ՋՈՒԼԻԵՏԱ ՍԱՐԱԹՅԱՆ

հետո Վրաստանի կրթության, գիտության եւ երտասարդության նախարարի հրամանով հաստատվել է Տաբաժուրի հանրային դպրոցի տնօրենի պաշտոնում:

- Տիկին Արփինե, 2024-2025 ուսումնական տարին Ձեզ համար առանձնահատուկ է` Դուք դպրոց եք մտնում ոչ թե որպես սոսկ մանկավարժ, ինչպես եղել է նախորդ տարիներին, այլ` որպես կրթօջախի տնօրեն, ըստ այդմ` ի՞նչ զգացումներով եք դիմավորում այս յուրահատուկ ուսումնական տարին:

- Աշակերտներին, ուսուցիչներին եւ ծնողներին դպրոցի տնօրենի կարգավիճակով դիմավորելը` միաժամանակ ե՛ւ հուզիչ է, ե՛ւ պարտավորեցնող: Այդ պահին ինձ հիշեցրեց իմ կյանքի անմոռանալի օրը, երբ, իբրեւ առաջին դասարանցի, ուրբ դեռի Շահումյանի թիվ 1 հանրային դպրոց, եւ Արտուշ Ուռույանը` կրթօջախի, ցավոք, այսօր երջանկահիշատակ տնօրենը, հայրական գործվանքով բռնելով ձեռքս, ինձ տարավ դասարան: Քաջալերված նրա գուրգուրող հայացքից` ես մանկական պարզությամբ ասացի, որ ցանկանում եմ իրեն նմանվել եւ դառնալ դպրոցի տնօրեն:

Այսօր երազանքս կատարվել է... ես խոնարհվում եմ իմ սիրելի տնօրենի հիշատակին, շնորհակալ եմ բոլոր ուսուցիչներին, որոնց շնորհիվ կարողացա ճիշտ մասնագիտություն ընտրել ու այսօրվա ուրախությամբ հարստացնել իմ ոչ շատ հարուստ` 7 տարիների, մանկավարժական կենսագրությունը:

- Մեզ, կարծում ենք նաեւ ընթերցողին, հետաքրքիր է Ձեր կյանքի մի մանրամասնություն` լինելով շահումյանցի, ինչպե՞ս դարձաք տաբաժուրցի եւ ինչպե՞ս եք հարմարվում իր աշխարհագրական դիրքով Ձեզ անսովոր` բարձ-

րադիր Տաբաժուրի կլիմային:

- Իրականում, ցածրադիր Շահումյան ավանից հետո ծովի մակարդակից 2000 մետր բարձունքում գտնվող Տաբաժուրի գյուղում ապրելը, նոր ու հետաքրքիր բացահայտումներ պարզեւեց ինձ: Տեղացիները սիրով, հարգանքով, ջերմությամբ են ընդունում ինձ` ոչ տեղացու, ու, երեւի թե, դա' է պատճառը, որ ես ինձ այստեղ շա՛տ լավ եմ զգում, ավելին` առաջին օրվանից Տաբաժուրին դարձել է իմ հարազատ տունը...

- Ե՞րբ է հիմնադրվել Տաբաժուրի դպրոցը եւ ներկայումս քանի՞ աշակերտ ունի:

- Այսօրվա մեր հանրային դպրոցը հիմնադրվել է 112 տարի առաջ` 1912թ-ն` դպրոցի ուսուցիչ Արշակ Գրիգորյանի եւ գյուղի քահանա Արշակ Տեր-Գալստյանի նախաձեռնությամբ: Այն ունի պատկառելի` մեկ դարից ավելի, տարեգրություն: Այժմ դպրոցում սովորում է մոտ 100 աշակերտ, ունենք 17 մանկավարժ, դպրոցը պատրաստ է նոր ուսումնական տարվան: Ի դեպ, այսօրվա տվյալները ենթակա են հավանական փոփոխության, քանի որ ամեն օր սպասվում է նոր առաջին դասարանցի, առայժմ նրանք 5-6-ն են: Նշեմ նաեւ, որ 2023-2024 ուստարվա շրջանավարտներից 3-ն ընդունվել են Վրաստանի պետական կրթական տարբեր հաստատություններ, իսկ 2-ը ուսանելու են Հայաստանում:

- Մեկ դարից ավելի պատմություն ունեցող դպրոցը, անշուշտ, կունենա նաեւ նշանավոր շրջանավարտներ, օրինակ` Բոլնիս-Խաչենը հպարտանում է Աղայանով, Այազման` Գուսան Հավասիով, Կարծախը` Գուսան Ջի-

ՀԱՐՑ - ՊԱՏՃԱՍԽԱՆ ԱՅԼԱԶԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՑԱՎ. ՆԱԽ ՊԱՐԶԻՐ ՊԱՏՃԱՌԸ, ՀԵՏՈ ԲՈՒԺԻՐ



Վերջին ժամանակներին հաճախակի դարձած գլխացավը լուրջ հիմնախնդիրներ է ստեղծում: Այն սկսվում է հանկարծակի, հաճախ անհարմար պահի, խանգարում է նորմալ աշխատելուն և ապրելուն: Փորձում եմ փարբեր...

ղեղամիջոցներ, որոշ ժամանակ օգնում են, ապա նորից ամեն ինչ կրկնվում է: Հգիտեմ ինչպե՞ս վարվել: ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Բաթումի

Միանգամից նշենք, որ գլխացավի միջոցով օրգանիզմը մեզ ազդակ է ուղարկում, որ ինչ-որ բան այն չէ: Եթե ձեր գլուխը հաճախ չի ցավում, իսկ ցավելիս էլ գլխի եք ընկնում, թե պատճառն ինչն է, ապա առանձնապես անհանգստանալու կարիք չկա: Սակայն, գլխացավը կարող է նաեւ լուրջ հիվանդությունների մասին վկայել: Մասնավորապես, եթե, 40 տարին լրանալուց հետո, առանց որեւէ պատճառի ձեր գլուխը սկսել է պարբերաբար ցավել, գլխացավերն ավելի ու ավելի հաճախակի են դարձել և գնալով սաստկանում են, ուղեկցվում թմրածության զգացումով, գլխապտույտներով, տեսողության կամ հիշողության վատթարացմամբ և գլխացավը փչացնում է ձեր կյանքը, խոչընդո-

տում ծրագրերի իրագործմանը, գլխացավին նաեւ այլ ցավեր են ավելանում և հաճախ եք գլխացավ ունենում ու միաժամանակ հիպերտոնիկ հիվանդություն ունեք, ապա՝ անհրաժեշտ է դիմել բժշկի: Ինչ վերաբերում է ժողովրդական բուժման մեթոդներին, ապա, գլխացավի դեպքում, քունքերը, պարանոցը և ճակատը շփեք վիետնամական «Աստղիկ» բալզամով (որպես կանոն, կես ժամից ցավը հանգստացնում է) կամ կաղամախու փայտից մի փոքր կտոր կտրեք (լուցկու տուփից մի քիչ մեծ) և դրեք թեւատակին կամ վիրակապով ամրացրեք գլխի այն հատվածին, որտեղ ցավն ավելի ուժեղ է: Հենց որ ցավը հանգստանա, փայտի կտորը կարելի է հանել:

ՀԵՏԱՔՐԹԻՐ Է

ԱԼԿՈՂՈՆ ՕԳՆՈՒՄ Է ՑՐԵԼ ՍԹՐԵՍԸ

Առօրյա հոգսերից «փախչելու» համար, հաճախ, որպես լավագույն միջոց են համարում խմելու հարկե, ոչ թե հարբելու, այլ՝ փրամադրությունը բարձրացնելու, առօրյային ավելի թեթեւ վերաբերվելու համար: Տնեցիներին դա դուր չի գալիս, հաճախ դիտողություն են անում, չեն հասկանում, որ այդպես ես հանգստանում եմ: Հգիտեմ, թե ինչպե՞ս նրանց դա բացատրեմ: Գ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Նիոնոմիդա



Հոգսերից, առօրյայից «փախչելու» ձեր մեթոդը այնքան էլ արդյունավետ չէ: Հաճախ հոգնած մարդը փորձում է տրամադրությունը բարձրացնել ակոհոլի օգնությամբ: Բայց իրականում դա ճիշտ չէ... Չէ՞ որ պետք է շատ քիչ խմել՝ 20-30 մլ օղի կամ կոնյակ կամ էլ 40 մլ գինի կամ մարտինի: Այդպիսի փոքր քանակը հանում է ներքին լարվածությունը եւ օգնում թուլանալ: Սա, ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ համապատասխանում է «սթրեսը ցրելու» մտադրությանը: Ցավոք, շատ ավելի հաճախ այդ նպատակի համար օգտա-

գործվում են սպիրտային խմիչքների շատ ավելի ծանրակշիռ չափաքանակներ: Եվ այստեղ սցենարը կարող է զարգանալ երկու ճանապարհով: Առաջինը՝ հոգնածությունը խորանում է, տրամադրությունն անկում է ապրում, սկսվում է յուրատեսակ դեպրեսիա, որը ներքին հոգնածության զգացումը էլ ավելի է սաստկացնում: Երկրորդը՝ ակոհոլային էյֆորիան է, որը նույնպես անխուսափելիորեն ավարտվում է դեպրեսիայով: Ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ դեպքում սթրեսից ազատվելու մասին խոսք լինելի կարող:

Հոգսերից, առօրյայից «փախչելու» ձեր մեթոդը այնքան էլ արդյունավետ չէ: Հաճախ հոգնած մարդը փորձում է տրամադրությունը բարձրացնել ակոհոլի օգնությամբ: Բայց իրականում դա ճիշտ չէ... Չէ՞ որ պետք է շատ քիչ խմել՝ 20-30 մլ օղի կամ կոնյակ կամ էլ 40 մլ գինի կամ մարտինի: Այդպիսի փոքր քանակը հանում է ներքին լարվածությունը եւ օգնում թուլանալ: Սա, ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ համապատասխանում է «սթրեսը ցրելու» մտադրությանը: Ցավոք, շատ ավելի հաճախ այդ նպատակի համար օգտա-

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԻԵՐԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ ԿՆՈՋ ԿՅԱՆՔՈՒՄ

Հնուց եկող կարծրատիպը կնոջ դերի մասին մինչեւ այսօր էլ մնում է մեր ենթագիտակցության մեջ: Անկասկած, իր բնությանը կինը նախելառաջ մայր է, օջախի պահպան: Տղամարդիկ հայթայթողներ են ու զինվորներ: Կնոջ գործառույթն է՝ կայունացնել, պահել-պահպանել եղածը ինչպես կա: Տղամարդկային ներուժն ուղղված է դեպի փոփոխություններն ու հեղաշրջումը: Բնության հետ դժվար է վիճել:



Այնուամենայնիվ, այսօր կանայք հակադրվում են բնությանը եւ կտորում կարծրատիպերը: Նրանք ավելի հաճախ են հրաժարվում միայն տանը նստելուց ու երեխաներ մեծացնելուց, չեն բավարարվում ընդամենը տղամարդուն ուղղորդող «պարանոցի» դերով, այլեւ ցանկանում են ստանձնել «գլուխ» լինելու պատասխանատվությունը:

«Կին լինելու» համար: Իսկ երբ տուն է վերադառնում, հանում է բիզնես-լեդիի դիմակն ու ցածր լալիս: Այո, նա ունի սիրո, հոգածության, աջակցության կարիք, բայց այդ ամենին, պարզապես, այլեւ չի հավատում:

Կնոջ բնությունը ժողովրդական իմաստությունը կնոջ բնության մասին ասում է՝ «Աստված կնոջը չստեղծեց տղամարդու ոտքից, որպեսզի դրանով նվաստացրած լինի նրան: Չստեղծեց գլխից, որպեսզի նա չգերազանցի տղամարդուն: Արարիչը կնոջը ստեղծեց կողոսկրից (որը սերտ միացած է մյուս կողոսկրին), որպեսզի նա հավասարության մեջ գտնվի տղամարդու հետ»: Բացի այդ, կողոսկրը գտնվում է ձեռքի տակ: Դրանով Տերը հուշեց, որ տղամարդը պետք է պաշտպանի ու փայփայի կնոջը: Եվ վերջապես, այն գտնվում է սրտի շրջանում, իսկ դա վկայում է այն, որ կինը պետք է սիրված լինի տղամարդու կողմից: Անխոս, ժողովրդական իմաստությունը գեղեցիկ է բովանդակությամբ: Բայց, արդյոք, մի՞շտ է այն համապատասխանում իրականությանը... Ցավոք, ոչ: Եվ դրա պատճառները բազմաթիվ են:

Ընտանիք, թե՛ կարիերա Ինչպե՞ս կատարել ճիշտ ընտրություն Կանայք, ինչպես տղամարդիկ, տարբեր են: Ոմանք երազում են հաջող ամուսնանալ, երեխաներ ունենալ եւ երջանիկ զգալ մոր, քնքուշ կնոջ ու օջախի պահպանի դերում: Մյուսներն իրենց կյանքը չեն պատկերացնում առանց աշխատանքի, կարիերայում՝ առաջընթացի, առանց հասարակական գործունեության... Բայց ե՛լ առաջինները, ե՛լ երկրորդներն ունեն իրավունք լինելու երջանիկ:

ԻՆՉՆՈՒ ԵՆ ԿԱՆԱՅԵ ՍՏԱՆՃՆՈՒՄ ԽԱՅԹԱՅԹՈՂԻ ԴԵՐՈՂ

Նախ՝ ոչ բոլոր կանայք են ցանկանում կին մնալ, ուստի փորձում են իրենց տղամարդու դերում: Նրանք կան բոլոր ոլորտներում՝ բիզնեսում, գիտության, քաղաքականության մեջ, դեկին... Լավագույն դեպքում՝ դրա պատճառն այն է, որ որոշակի ներքին պոտենցիալ առաջ է մղվում եւ պահանջում իրացում: Կինը մտածում է, որ ինքն էլ արժանի է դառնալու անհատականություն, օգտակար լինելու ոչ միայն ընտանիքում, այլեւ հասարակության մեջ, ապրելու իր հետաքրքրությունների ու հայացքների համաձայն: Բայց, ինչպես ասում են, մի գդալ աղը կաթսայում կարող է քիչ լինել, իսկ ավսեի մեջ շատ է: Ուստի, պետք է առաջնորդվել «ոսկե միջինի» օրենքով: Առաջին հերթին կինը պետք է մտածի ընտանիքի, ապա՝ կարիերայի ու անձնական աճի մասին:

Կանայց խորհուրդ է տրվում բացարձակ անկեղծ պատասխանել մի շատ կարեւոր հարցի՝ «Դուք ձեզ երջանիկ զգո՞ւմ եք»: Եթե պատասխանը դրական է, ուրեմն ձեր կատարած ընտրությունը ճիշտ է՝ լինի ընտանիք, թե կարիերա: Ուրեմն կարողանում եք հաջող համատեղել ե՛լ այն, ե՛լ այն՝ հաճույք ստանալով կյանքի հագեցած ու ակտիվ ռիթմից:

Միայն ընտրության հետեւանքները

Եթե կարիերան կարեւորագույն տեղ է գրավում ձեր կյանքում, ամենայն հավանականությամբ, դուք բազմաթիվ ընտանեկան խնդիրների կբախվեք: Ի հայտ է գալիս փոխըմբռնման բացակայություն ամուսնու, երեխաների կողմից, մեղադրանքներ, կոնֆլիկտներ... Իսկ, երբ գիտակցեք ձեր թերացումը, դժվար կլինի ուղղել սխալների արդեն ամբողջ շարքը, որոնց սերմը հենց դուք եք դրել:

Եթե «տան կին» եք, կրկին պետք է խորը մտածեք: Տղամարդկանց հետաքրքրում են կանայք, ովքեր զբաղվում են նաեւ ինչ-որ այլ բանով՝ բացի տնից ու երեխաներից: Ձեզ համար ինչ-որ հոբբի, զբաղմունք գտեք: Չէ՞ որ ոչ այդքան բարդ, հոգեհարազատ աշխատանք կարելի է համատեղել կնոջ պարտականությունների հետ: Ձեզ, անշուշտ, հաճելի կլինի ամուսնուն ու երեխաներին այդ պարտականությունները, քանի որ ստիպված է դա անել:

Շատ ավելի բարդ վիճակ է բաժին ընկնում այն կանանց, ովքեր երջանիկ կլինեին, եթե նստեին տանն ու երեխաներով զբաղվեին, բայց երբ ամուսինն իրեն չի արդարացնում, նրանք ստիպված են ե՛լ աշխատել՝ ընտանիքի ապրուստը հայթայթելու համար, ե՛լ հասցնել տան գործերը: Դա, իհարկե, շատ դժվար է: Ամենակարեւորը ինքը քեզնից «գլուխ հանելն է», հասկանալը՝ որն է ձեզ համար ավելի կարեւոր՝ կարիերա՞ն, թե՞ ընտանիքը:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

- Ինչը վայելուչ է, արժանի է հարգանքի, եւ ինչը արժանի է հարգանքի, միշտ էլ վայելուչ է: Մ.ԳՈՐԿԻ
- Մենք միշտ սիրում ենք նրանց, ովքեր հիանում են մեզանով, բայց միշտ չէ, որ սիրում ենք նրանց, որքեր մեզ են հիացնում: Չ.ՉԱՊԼԻՆ
- Չարմանալի է, թե ինչո՞ւ են մարդիկ հարցնում այն ապրանքի գինը, որը նրանց ընդհանրապես պետք չէ, ապա՝ երկար ժամանակ պարզում, թե ինչո՞ւ է այն այդքան թանկ: Վ.ԴԱՐԲԻՆՅԱՆ «Վրաստանի» ընթերցող Ծալկայի մունիցիպալիտետ



ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆԳՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՍԵՐՈՒԿ» ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՅԵՅ ԵՎ ԵՆՈՒՅԹ ՈՒՆԵՆԱԿ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՄԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ ԼԱՇԱ ՂԱՐՍԱԼԻԱՆ

Սեպտեմբերի 10-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեւանում անցկացրեց «Երեւանյան երկխոսություն» համաժողովի մասնակիցներին ներկայացրեց «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, որը, վարչապետի համոզմամբ, ուղղված է Հարավային Կովկասում տարածաշրջանային կոնունկացիաների բացմանը:



որ են մեզ համար, մենք հնարավորություն ենք ունենում նաեւ երկաթուղային կապ ունենալ Թուրքիայի, Եվրոպայի, Ռուսաստանի հետ: Իհարկէ, նաեւ Ադրբեջանը հնարավորություն է ունենում Հայաստանի տարածքով երկաթուղային կապ ունենալ Թուրքիայի, Իրանի հետ, իհարկէ, այստեղ կարելու է նաեւ Նախիջևանի եւ Ադրբեջանի հիմնական մասի միջեւ ավտոմոբիլային եւ երկաթուղային կապի հաստատումը Հայաստանի տարածքով: Մենք պատրաստ ենք ման հաղորդակցություն տրամադրել,- ասաց Փաշինյանը:

- «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը նախատեսում է ոչ միայն Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ տարածաշրջանային կոնունկացիաները, այսինքն՝ երկաթուղի, ավտոճանապարհ, հնարավոր մալուխներ, հնարավոր գազամուղեր, էլեկտրագծեր, այլ հաղորդակցության ուղիներ բացել, այլեւ ենթակառուցվածք է, որ ման գարգացում պիտի տեղի ունենա նաեւ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ: Իհարկէ, «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը մեզ համար կարելու է նաեւ այն պատճառով, որ, այն իրականացնելու դեպքում, հնարավորություն ենք ստանում երկաթուղային կապ ունենալ Իրանի հետ, որի հետ հարաբերությունները շատ կարեւոր են մեր համար, մենք հնարավորություն ենք ունենում նաեւ երկաթուղային կապ ունենալ Թուրքիայի, Եվրոպայի, Ռուսաստանի հետ: Իհարկէ, նաեւ Ադրբեջանը հնարավորություն է ունենում Հայաստանի տարածքով երկաթուղային կապ ունենալ Թուրքիայի, Իրանի հետ, իհարկէ, այստեղ կարելու է նաեւ Նախիջևանի եւ Ադրբեջանի հիմնական մասի միջեւ ավտոմոբիլային եւ երկաթուղային կապի հաստատումը Հայաստանի տարածքով: Մենք պատրաստ ենք ման հաղորդակցություն տրամադրել,- ասաց Փաշինյանը:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Սեպտեմբերի 9-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունեց Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, Եվրոպական կենսակերպի խթանման հարցերով հանձնակատար Մարգարիտա Սիխնասի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը նշվեց, որ այցը կնպաստի Հայաստան-ԵՄ համագործակցության օրակարգի քննարկմանն ու փոխգործակցության հետագա զարգացմանը: Հայաստանի վարչապետը նշեց, որ ԵՄ-ի հետ սերտ փոխգործակցությունը նպաստում է Հայաստանում ինստիտուցիոնալ բարեփոխումներն առավել արդյունավետ առաջ մղելուն:

Ջրուցակիցները քննարկեցին նաեւ այս տարվա ապրիլի 5-ին Բրյուսելում, Հայաստանի վարչապետի, Եվրոպական հանձնաժողովի նախագահի եւ ԱՄՆ պետքարտուղարի բարձր մակարդակի հանդիպմանը ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացմանը վերաբերող հարցեր: Մտքեր փոխանակվեցին տարածաշրջանային նշանակության այլ հարցերի շուրջ:

ԱՏՈՐԱԳՐԱՅԱՎԱՔ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը, սեպտեմբերի 11-ի հերթական նիստում, բավարարել է 51 քաղաքացիների դիմումը՝ «Եվրամիությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» Հայաստանի օրենքի նախագիծը քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջարկելու նպատակով նախաձեռնող խումբ կազմավորելու վերաբերյալ: Նախաձեռնող խմբի լիազոր է նշանակվել Արտակ Հայկազի Ձեյնալյանը:

ԵՄ-ին Հայաստանի անդամակցության գործընթաց սկսելու հարցը հանրաքվեի դնելու համար ստորագրահավաքի առաջարկով հանդես են եկել երեք քաղաքական ուժեր՝ «Հայաստանի Եվրոպական» կուսակցությունը, «Հանրապետություն» կուսակցությունը, «Հանուն Հանրապետության» կուսակցությունը:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ «ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հյուրընկալեց Ազգային ժողովի «Ամառային դպրոց» ծրագրի մասնակիցներին, որոնք ներկայացնում են երեւանի եւ մարզերի դպրոցները:



Վարչապետը ողջունեց աշակերտներին եւ «Ամառային դպրոց» ծրագրին մասնակցելու նրանց նախաձեռնությունը, պատասխանեց տարբեր հարցերի՝ կառավարության գործունեությանը, կրթությանը, Հայաստանի արտաքին քաղաքականությանը, տարածաշրջանային զարգացումներին եւ այլ թեմաներին վերաբերող:

Վշակերտները շնորհակալություն հայտնեցին հետաքրքիր հանդիպման, հարցերին հանգամանալից պատասխանելու եւ ջերմ ընդունելության համար:

ՄԱՆԱՅԵԼ Է ԳՐԱԿԱՆԱԳԵՏ, «ՀԱՅՈՍ-ՔԱՐԹՈՍ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ ՖԵԼԻՔՍ ԲԱՆԻՅԱՆԸ

Կյանքի 74-րդ տարում մահացել է գրականագետ, թարգմանիչ, Հայաստանի գրողների միության (ՀԳՄ) անդամ Ֆելիքս Բախչինյանը:

Ֆելիքս Բախչինյանը ծնվել է 1950 թ., սեպտեմբերի 22-ին, Ալավերդի քաղաքում: Ավարտել է Վանաձորի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը եւ Վիլնյուսի պետականալսարանում զբաղվել է հայլիտվական գրական-մշակութային կապերի ուսումնասիրությամբ: Աշխատել է հանրապետական մի շարք թերթերում, եղել է ՀԳՄ նախագահի եւ Լուռու մարզպետի խորհրդակցական, հիմնադրել է «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամը եւ «Հայոս-Քարթլոս» հայ-վրացական գրական

անկախ հանդեսը: Պարբերականի էջերում տեղ գտած նյութերը նպաստել են երկու դարավոր եղբայր ժողովուրդների բարեկամության խորացմանը: Ֆ.Բախչինյանը տարիներ շարունակ սերտ հարաբերություններ է ունեցել Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության, Ալ.Պուշկինի (այժմ՝ Իլիայի անվան) պետական մանկավարժական համալսարանի, «Վրաստան» թերթի հետ: Եղել է Սայաթ-Նովայի միջկրթական «Վարդատուն» հաճախակի հյուրերից ու բանախոսներից:

100-ից ավելի գրքերի, պատմվածքների, վիպակների, գրականագիտական հոդվածների եւ մենագրությունների հեղինակ է: Գրական բեղմնավոր գործունեության համար արժանացել է ՀԳՄ «Գրական վաստակի», ՀՀ Սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալների, մրցանակների ու այլ պարգևների:



ՀԱՍՏԱՏՎԵՅ ԵՐԵՎԱՆԻ ՂԵՆԱՎՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ Երեւանի ավագանին, սեպտեմբերի 10-ի նիստում, քննարկել է ընդունել «Երեւան քաղաքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» որոշման նախագիծը: Երեւանի նոր գլխավոր հատակագիծով որոշ սահմանափակումներ են իրականացվել բակային տարածքների մասով: Ընդգրկվել է մայրաքաղաքում առկա այգիների ցանկն ու մակերեսները: Որպես հատուկ պահպանվող կանաչ տարածքի կարգավիճակ է շնորհվել Հրազդանի կիրճին, որը ներառվել է սահմանափակումների մեջ՝ հեղափոխում այնպիսի ցանկացած փոփոխությունները բացառելու նպատակով: Առկա ելակետային նյութերի հիման վրա՝ թարմացվել է Երեւանի ճանապարհափողոցային ցանցը:

ԱՐՄԵՆՈՒԻ ՂԱԶԱՐՅԱՆԸ ԵՐԳՍԱՄԲ ՍՏԱՆՑԵՅ ՊԱՏՎԱԿՈՐԻ ՄԱՆՂԱՍԵ

Սեպտեմբերի 9-ին Հայաստանի ազգային ժողովի պատգամավոր Արմենուհի Ղազարյանը երդմամբ ստանցնեց պատգամավորական լիազորությունները: Արմենուհի Ղազարյանը խորհրդարանում փոխարինել է Գուրգեն Արսենյանին, որը նշանակվել էր ՌԴ-ում Հայաստանի դեսպան ու հրաժարվել պատգամավորական մանդատից:



ԵՐԵՔ ՀԱԶԱՐ ՆՈՐ ՌԻՍՈՒՅԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԴՐՈՅՆԵՐՈՒՄ

Հայաստանի դպրոցներում 2023-ի ընթացքում աշխատանքի է անցել ավելի քան 3000 նոր ուսուցիչ: Այդ մասին հայտարարեց Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը: Նախարարն ուրախալի համարեց այն փաստը, որ, ավելի քան 3000 նոր ուսուցիչների շրջանում, ավելի քան 30 տոկոսը կազմում են երիտասարդ, նաեւ՝ միջին տարիքի ուսուցիչները:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐԻ» ՈՒՂԻՉ ԳՎԵՐԹԵՐԸ՝ ԵՐԵՎԱՆԻՅ ԳԵԼԻ

«Հայկական ավիաուղիները» նոյեմբերի 15-ից կսկսի ուղիղ չվերթեր՝ Հայաստանից դեպի Հոնկոնգ: Թռիչքները կիրականացվեն շաբաթական երկու անգամ՝ հարմարավետ Airbus 321-200 ինքնաթիռով, որը նախատեսված է 220 ուղևորի համար: Մոսկվայից («Շերմետեյու» օդանավակայան) դեպի Դելի փոխադրված թռիչքները ուղևորներին հասանելի կլինեն նաեւ Երեւանից՝ միջանկյալ, փոխանցիկ չվերթով: «Հայկական ավիաուղիները» հիմնադրվել է 2022 թվականի դեկտեմբերին եւ ներկայում ուղիղ կանոնավոր չվերթեր է իրականացնում Երեւանի «Ջվարթնոց» միջազգային օդանավակայանից դեպի Բաթում, Մոսկվա, Սոչի, Միներալնիե Վոդի, Ուֆա եւ Կազան:

ՓՈՐՏ - 2024

ՊԱՐԱՍՈՒՄՊԻԿ ԽԱՂԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ 14 ՄԱՐԶԻԿՆԵՐԻՑ 9-Ը ՎԵՐԱՂԱՐՁԱՆ ՄԵՂԱՆՆԵՐՈՎ

Սեպտեմբերի 12-ին Պետական արարողությունների պալատում կայացավ պարասուպիստների դիմավորման արարողությունը:

Միջոցառմանն իր խոսքում Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն շնորհավորեց պարասուպիստներին Պարասուպիստ 17-րդ խաղերում աննախընթաց հաջողության համար եւ հայտարարեց, որ պարասուպիստները եւս կստանան պարգևատրումներ ու պետական պարգևներ:

Հիշեցնենք, որ 184 երկրների 4400 մարզիկ-մարզուհիների մասնակցությամբ մարզական փառատոնի 20 մարզածեղում խաղարկվեց մեդալների 549 հավաքածու:

Վեց մարզածեղում 14 մարզիկով հանդես եկող Վրաստանի հավաքականն իր ակտիվում գրանցեց տարբեր

արժողության 9 մեդալ, ինչ պատմական արդյունք է վրացական պարասուպիստի համար:

Պարասուպիստի մրցաշարի չեմպիոն է դարձել Գիգա Օչկիվիձեն, արծաթե մեդալներ են նվաճել պարահրաձիգ Վլադիմիր Գինճարաուլին, պարաձյուղիստներ Զուրաբ Զուրաբիանին, Գիորգի Քալաշնին ու Ռեւազ Չիկոիձեն, իսկ բրոնզե մեդալներ են նվաճել պարաթեքվանդիստուհի Աննա Ջափարիձեն, սայլակով սուսերամարտիկ Նինո Թիբիլաշվիլին, պարաձյուղիստ Ինա Քալաշնին, Ակակի Ջինճարաձեն:

Պարասուպիստ խաղերին երեք մարզածեղում երեք



մարզիկներով հանդես եկող Հայաստանի հավաքականը, ցավոք, տուն վերադարձավ առանց մեդալների:

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ «ԱՐՈՒԼԻ» ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ՄԵԿԵՆԱՐԿԸ ԵՐԿՐՈՐԴ ԽԱՂԱՇՐՋԱՆՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել էինք, Վրաստանի առաջնության տարածաշրջանային լիգայում հանդես եկող Ախալքալաքի «Արուլ» առաջին խաղաշրջանը եզրափակեց 17 միավորով (5 հաղթանակ, երկու ոչ-ոքի, հինգ պարտություն): Երկրորդ խաղաշրջանի մեկնարկային երկու հանդիպումներում ախալքալաքցիներն իրենց ակտիվում գրանցեցին 4 միավոր, դրանով իսկ բավականին կարգավորեցին իրենց մրցաշարային վիճակը:

«Վրաստանի» հետ հեռախոսազրույցում «Արուլի» գլխավոր մարզիչ Արամ Սուքիասյանն ասաց, որ, ներկա դրությամբ, թիմային խաղը կայունացել է, եւ վերջին հանդիպումները հստակ ցույց տվեցին, որ այդ ուղղությամբ տեղաշարժեր կատարվել են:

«Թիմը աստիճանաբար հստակեցնում է խաղը եւ դրա վկայությունը թբիլիսիի «Գլդանի» ակումբի հետ մեր հանդիպումն է, որը հաղթեցինք 6:2 հաշվով: Այդ հաղթանակը հոգեբանական առումով շատ նշանակալի էր: Տղաները համոզվեցին, որ ի վիճակի են լուծելու թիմի առաջ ծառայած բոլոր հարցերը:

Հարցին, թե որքանով է իրատեսական «Արուլի» կողմից Վրաստանի առաջնության չորրորդ լիգայի ուղեգրի նվաճումը, Արամ

Սուքիասյանը պատասխանեց.

«Այսօր թիմը տարածաշրջանային լիգայի ենթախմբում զբաղեցնում է յոթերորդ տեղը: Մեր խմբում կան ուժեղ թիմեր, մասնավորապես՝ Ախալքալաքի, Թբիլիսիի, Կասպիի... Մրցակցության մակարդակը բարձր է: Բարեբախտաբար, ինչպես նշեցի, թիմի խաղը կայունանում է եւ դրանում մեծ է խաղացող մարզիչ Ռաֆայել Դարբինյանի, ֆուտբոլիստներ Ռոմիկ Գորոխյանի, Ստեփան Մարգարյանի, մյուսների ներդրումը: Ի դեպ, նշեմ, որ թիմի ռմբարկումը՝ Ռաֆայել Դարբինյանը ակտիվում արդեն ունի 13 գոլակ, ինչը արդեն իսկ ռեկորդային է թիմի պատմության մեջ:

Կարծում եմ, հաջորդ հանդիպումներում կցուցադրենք ավելի հիմնավոր ու տակտիկապես հազեցած խաղ:



ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 7-ին եւ 10-ին ֆուտբոլի Ազգերի լիգայի ենթախմբում անցկացվեցին մեկնարկային հանդիպումներ:

Լիգայի «B» դիվիզիոնում հանդես եկող Վրաստանի հավաքականը՝ մրցաշարի մեկնարկային հանդիպմանը սեփական հարկի տակ, 4:1 հաշվով պարտության մատնեց Չեխիայի հավաքականին, ապա՝ սեպտեմբերի 10-ին, մրցակցի դաշտում, 1:0 հաշվով առավելության հասավ մինչ այդ ենթախմբի առաջատարներից մեկի՝ Ալբանիայի հավաքականի նկատմամբ եւ երկու հանդիպումից հետո առավելագույնը՝ 6 միավորով, միամենյա գլխավորում է մրցաշարային աղյուսակը:

Ազգերի լիգայի ենթախմբային երրորդ հանդիպումը Վրաստանի հավաքականը կանցկացնի մրցակցի դաշտում, մեկ ամիս անց՝ հոկ-

տեմբերի 11-ին, ենթախմբի չորրորդ հավաքականի՝ Ուկրաինայի հետ:

Ազգերի լիգայի C4 ենթախմբում հանդես եկող Հայաստանի հավաքականը եւս, մեկնարկային հանդիպմանը, 4:1 հաշվով առավելության հասավ Լատվիայի հավաքականի նկատմամբ, թեպետ սեպտեմբերի 10-ին, մրցակցի դաշտում, չնայած թվային առավելության, 0:2 հաշվով զիջեց Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականին եւ երեք միավորով ենթախմբում զբաղեցնում է երկրորդ տեղը:

Հոկտեմբերի 10-ին Հայաստանի ընտրանին, մրցակցի դաշտում, իր ուժերը կչափի Ֆարերների հավաքականի հետ:

		1	2	3	4	5	6		
7					8				
				9					
10	11	12			13	14	15		
			16	17	18				
19	20	21							
	22				23	24	25	26	
				27	28				
29	30	31		32					
	33				34	35	36		
			37	38					
39	40				41	42	43		
			44	45	46				
47	48			49					
	50	51				52	53		
54				55					
		57				58			

Խ Ա Չ Բ Ա Ո

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 7.Խառնաշփոթություն: 8.Մեխանիզմի գծագիր: 9.Գրող Գարեգին ...: 10.Հին հեթանոսական տաճար Հայաստանում: 13.Քաղաք Նիդերլանդներում: 18.Բույսի մակաբույծ միջատ: 19.Ազատամարտիկ, բուժբույր ... Դարայան: 22.Պարտաթուղթ: 23.Վուշ: 28.Խոշոր լիճ Աֆրիկայում: 29.Հայիոյանք: 32.Բաշկիրիայի մայրաքաղաքը: 33.Եկեղեցում սպասավորելիս՝ սարկավագի ծախ ուսին զգվող լայն, ժապավենածե կտոր: 34.Լեհաստանի դրամը՝ մինչ Եվրոն: 37.Ելումուտ անելու բացվածք պատի, ցանկապատի մեջ: 39.Աղետ, պատահար (ժող.): 41.Ազատ, անմասն: 44.Մարգարիտ: 46.Եղեխիա քաղաքն այժմ: 47.Ապլոդիսմենտ: 49.Զգացմունք: 50.Սոնոլոների վերջին մեծ խանը: 52.Մահացածի մարմին: 54.Որոճող ընտանի կենդանի: 55.Աֆրիկյան արյունածու կենդանածին ճանճ: 56.Թբիլիսցու դիմելածե: 57.Սփյուռքահայ անգլիագիր գրող ... Արլեն (Տիգրան Գույումճյան): 58.Գետ Հայկական լեռնաշխարհում, Արաքսի ձախ վտակը:

ՈՐՂՂԱՆՅԱՆ. 1.Ապառաժ, առապար: 2.Կրունկ, դարձյակ, մանթաշա (բրբ.): 3.Վրացական գրական մրցանակ, որը հիմնադրվել է 2003 թվականին: 4.ՀՀ-ն սոցիալիզմի օրոք: 5.Ֆեղեղ, ցեխա-

քարային զանգվածահոսք: 6.Լիլիպուտ: 11.Սեմական ծագմամբ ազգ: 12.Պարեն, մթերք: 14.Երկրամաս ՌԴ-ում: 15.Կեռաս (ժող.): 16.Հայոց սպարապետ, Սահառունի տոհմի նահապետը ... Սահառունի: 17.Միացյալ Ազգերի Կազմակերպություն: 20.Քաղաք Բելգիայի թագավորությունում: 21.Համեղ, անուշ: 24.Սեկին ընդօրինակելը, ծաղր: 25.Վրացի գրող ... Գորգածե: 26.Պապիկի կինը: 27.Անասունների խումբ: 30.Ռուս փոփ-երգիչ: 31.Օղագնացության եւ տիեզերական տարածության հետազոտությունների ազգային վարչություն: 35.Ամենաքաղցրը եւ ամենադառը: 36.Ռուսահող, հումուս: 37.Դրաստամատ Կանայան: 38.«Սարդարապատի հերոսամարտ» հուշահամալիրի հեղինակ, հայ ճարտարապետ ... Իսրայելյան: 40.Նետում, շարում: 42. Հավանաբար, ամենայն հավանականությամբ: 43.Որեւէ բան ծածկելու կտոր: 44.Հաղորդավար, երգիչ ... Աղախանյան: 45.Շորեր, որ պետք է լվանալ: 48.Գոմ, ձիանոց: 51.Հատուկ հարթակ թատերական ներկայացումների՝ համերգների համար: 52....-հանդիման: 53.Հուր, կրակ:

Կազմեց ԷԼԼԱ ԱՌԱՐԵԿՅԱԼԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊՍՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 1.Շվեդիա: 5.Տավուշ: 10.Որմ: 11.Արեճա: 12.Պաս: 13.Կուրանալ: 15.Սագ: 16.Անագե: 17.Այն: 18.Երբ: 19.Նավ: 20.Ելակ: 21.Եվա: 22.Ապրիլ: 25.Սրիդ: 26.Սարո: 28.Կարաս: 30.Արագ: 32.Հաղարջ: 33.Թագի: 34.Ուստի: 37.Ավետ: 38.Արիա: 39.Իբր: 41.Նանա: 42.Թերի: 44.Կարին: 45.Անուկ: 46.Երիկ: 48.Վանուշ: 50.Դաս: 52.Սեպ: 54.Նորմա: 55.Նաթալի: 56.Լյա: 57.Պիոներ: 58.Ալանի:

ՈՐՂՂԱՆՅԱՆ. 1.Շանտոնյե: 2.Ելիզավետա: 3.Իսպանիա: 4.Թմկաբերդ: 5.Տարածել: 6.Արագ: 7.Վեներա: 8.Ունա: 9.Շալվա: 10.Ոսկեպար: 14.Ուն: 23.Պիտանի: 24.Կոմիտաս: 25.Մսաղաց: 26.Սաթենիկ: 27.Ազատան: 29.Ահ: 30.Աջարական: 31.Ռուսթավելի: 35.Տարոն: 36.Իրիկուն: 40.Բկիր: 43.Ենա: 46.Էդմոն: 47.Բել: 49.Շոգի: 51.Սառա: 52.Սարա: 53.Պիտի:

Գլխավոր խմբագիր՝ **ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ**
 Գլխ. խմբագրի տեղակալ՝ **ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ**
 Համարի պատասխանատու՝ **ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՉՅԱՆ**
 Համակարգչային ձեւավորումը՝ **ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԿԵՂՅԱՆ**

ՔՅՅԵՈ ՅՈՆՁՅՅԵՄՈ: ՓՃՈԼՇՈՆՈ 0105, ՃՂՄԹՅՈԼՇՈՆ ՄՅՅԵՁ 5,
 Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ԹՅՂ. Հեռ. 2990-739, 2990-774
 www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
 Գրանցման վկայական № 4 Կ - 1439
 «ԿՈՂՈՐ» հրատարակչություն

«ՅՐԱՆԹՅՈՒՆ»
 ՓՃՈԼՇՈՆ, ՆՅՅՅԵՄՅՈԼՇՈՐ
 «ՅՐԱՍՏԱՆ»
 Тбилиси, Грузия
 <VRASTAN>
 Georgia, Tbilisi
 Индекс 66445